


Q-43H

111111



6/2

# ԼԻՐ ԱՐՔԵՑ

(ՕՍՏՐՈԳՈՐԾՎՈՒԹ ՓԱՂԱՎԱՆՆԵՐԻՑ)

Թարգմանելից  
Յիրուհի Կոստանեանց

Տպարան Մ. Շարամբէ, նկ. փ. ա. 21

1894



Lwq  
70

6/2

# LHF UPREUS

612

### (ՕԱՏՔՈՎԵՐԱԿՈՅ ՓՈՂՈՎԸՆԴՈՒԹԻՅԸ)

Թարգմանեց

## Տեղունի Առաջանեանց



ԹԻԳԼԻՄ

Տպարան Ա. Շարածէ, Կիկ փ. առ. 21


Типогр. М. Шарадзе, Никол. 21

1894

# ԼԻՐ ԱՐՔԱՅ

Дозв. цензур., Тифлисъ, 10 Марта 1894 г.

28-71



70-96



ատ վաղուց, դեռ հեթանոսական ժամանակներում ,  
մեծ ու լեռներով  
շըրջապատուած  
կղզու վերայ, Բրիտանիայում, թագաւորում էր Լիբարքան: Նա հոգ չէր տանում իւրեքիրները շատացնելու համար, այլ աշխատում էր, որ իրան հպատակ ժողովուրդն եր-

ջանիկ ու լաւ ապրի: Ալդ պատճառով էլ ժողովուրդը թագաւորին շատ սիրում, յարգում և պարձենում էր նորանով:

Լիր արքան շատ դիւրագրգիռ մարդ էր. և փոքր հասակից սկսած սովոր էր, որ բոլորն իւր ամեն մէկ չնչին ցանկութիւնը կատարեն. և նա իրան զսպել ու կառավարել չէր կարող: Նա շատ անգամ ասում էր. Ով որ իմ կամքս չի կատարի, լաւ է, որ չծնուի այս աշխարհիս երեսին: Նորա կինը մեռաւ, մնացին երեք աղջիկ. մեծի անունն էր Գօներիկա, երկրորդինը Ռեգանա, իսկ փոքրինը Կորդիւս: Լիր արքան երեքին էլ շատ էր սիրում, բայց ամենից աւելի սիրում էր փոքրին: Ալդպէս նա ապրեց մինչև ութսուն տարի. ծերութիւնը նորա մարմինը թուլացրեց, մարմնի հետ թուլացաւ և հոգին: Նա իւր պալատականների կեղծաւորութիւնից և շողոքորթութիւնից քչանալով, սկսեց վնթինթալ, բարկանալ, կռուել. ամեն մէկ չնչին բանից կատա-

ղում էր և քեչ քիչ իրան վատ բնաւորութեամբ բեռ դառաւ թէ իրան ընտանիքին և թէ ամբողջ պալատին: Նա իւր մեծ աղջկան մարդու տուեց Ալքանիի դուքսին, միջնէկին Կօրնվալիսի դուքսին, իսկ փոքրին, Կորդիլիալին, երկու ուզող կար՝ մէկը Փրանսիալի թագաւորն, իսկ միւսը Բուրգօնի դուքսը, բայց արքան փեսացուներին գեռ խօսք չէր տալիս, որովհետև Կօրդիլիալին շատ էր սիրում և չէր ուզում նորանից շուտով բաժանուել: Ծերունին չէր կամենում իւր իրաւունքներից ու թագաւորական փառքից զըկուել, այդ պատճառով ոչ մէկ աղջկան օժիտ չտուեց: Նոցա իրանց ամուսինների հետ միասին պահում էր իւր պալատում և խոստանում էր, որ մեռնելուց առաջ հաւասար բաժին տայ ամենքին:

Բայց ինչքան էլ Լիր արքան սիրում էր թագաւորութիւն անել, դարձեալ ծերութիւնը լազմեց նորան: Նա էլ չէր

կարող տանել թագաւորութեան ծանր  
բեռը և մտածեց որ արդէն ժամանակ է  
հանգստանալու և երիտասարդներին տեղ  
տալու:

Եթէ Լիը պրքալի տեղն ուրիշը լի-  
նէր, նա ուղղակի կը հրաժարուէր իւր գա-  
հից, կը հանգստանար և կ'ուրախանար  
իւր որդիքներով։ Բայց Լիըը, որ մի երես  
առած ծերունի էր և միշտ էլ անգործ-  
էր, ամեն բան ուրիշ տեսակ էր մտա-  
ծում ու սարքում։

Եւ այդպէս ութսուն տարեկան ծե-  
րունի թագաւորը, որ համարեա արդէն  
խելքը կորցրել էր, մի չտեսնուած ու  
չլուած բան մտածեց։ Մէկ օր, որ ոչ  
ոքի մտքից չէր անցնում, նա պալատի  
հանգիստոր դահլիճում հաւաքեց բոլոր  
պալատականներին, աղջկներին ու փեսա-  
ներին, նոյնպէս հարսնացու աղջկան և  
նորա փեսացուներին. և ինքը բազմելով  
գահի վերայ, հրամալեց տալ իրան տէ-  
րութեան քարտէզը. և ապա յայտնեց թէ

«ուզում եմ դագաղիս մէջ մտնել առանց  
հոգսի ու դարգի, այդ պատճառով կու-  
մենում եմ կենդանութեանս ժամանակ  
բաժանել թագաւորութիւնս։ Սիրելի աղ-  
ջիկներս, ասացէք ինձ, թէ երեքիցդ ո՞րն  
ինձ աւելի է սիրում, որ նորան այդ մեծ  
սիրոյ համար աւելի շատ լնծալ տամ։»

Երկու մեծ աղջկները, Գօներիլիսն  
և Ռեգանան, որ շատ խելօք, խորամանկ  
ու խարդախ էին և ծերունի հօր բար-  
կութիւններին համբերում էին միայն նո-  
րա համար, որ ժառանգութիւնից չզըր-  
կուեն և շատ լաւ հասկանալով, որ հայ-  
ը թէ իրան և թէ ուրիշներին լաւ չէ  
ճանաչում, վճռեցին գովասանքներով ու  
կեղծաւոր խօսքերով հօր աչքը մտնել,  
որ ժառանգութեան ամենալաւ մասն ի-  
րանք ստանան։ Եւ այդպէս Գօներիլիսն  
ու Ռեգանան խկոյն սկսեցին հաւատաց-  
նել հօրը, որ իրանք նորան աշխարհիս  
երեսին ամեն բանից աւելի են սիրում,  
թէ հարստութիւնից, թէ փառք ու պա-

տուից, թէ կեանքից, և թէ նոքա երջանիկ են միայն իբանց հօրը սիրելով ու պաշտելով։ Ծերունի հայրը շատ ուրախացաւ այդ կեղծ խօսքերը լսելով և ինչպէս առածն ասում է «հալած իւզի տեղ ընդունեց» և երկուսին էլ հաւասար բաժիններ տուեց ու առաջուց ուրախ ուրախ մտածում էր, թէ ինչ կ'ասէ արգեօք իւր ամենասիրելի աղջիկն, իւր կորդիլիան։

Իսկ Կորդիլիան, որին քոյրերը չեին սիրում և նախանձում էին, կանգնած էր լուռ ու աչքերը գետնին զցած։ Նա իւր երեխայութիւնից ասում էր այն, ինչ որ մտածում և զգում էր։ Նա վախվանով կանգնած էր մի անկիւնում և զգում էր, որ հօրը նա սիրում է շատ չափազանց և նա կարող է ցոյց տալ իւր սէրը միայն գործով, եթէ հարկաւոր լինի այդ։ Նա, որ սիրում էր մենակութիւն, պարզութիւն և անկեղծութիւն, նա չէր կարող այդ փառաւոր դահլիճում գուգուած ու

զարդարուած տիկինների և պարսնների առաջ հաւատացնել իւր հօրը, թէ նորան շատ սիրում և յարգում է։ Նա ուրախ կըլինէր, որ կարողանար այս անգամն էլ հօր երեխայական ցանկութիւնը կատարել, ինչպէս որ առաջ միշտ անում էր։ Բայց նա այնքան դժբախտ էր զգում իրան այդ բոպէին, որ չէր կարող կեղծաւոր երես անել հօր առջև և զինծու խօսքեր ասել նորան բոլորի մօտ։ Միթէ բաւական չէ, մտածում էր նա, որ ես սրտով շատ, անչափ սիրում եմ իմ հօրս։

Եւ երբ հայրը հարցըեց թէ «դէհ, դու իմ պատիկ ու վերջին աղջիկս, քեզ սիրում և քո պատճառովդ իրար հետ կովում են երկու զօրեղ ասպետներ, ապա խօսիր տեսնենք թէ դու ինչ կ'ասես... որ քո քոյրերիցդ աւելի լաւ բաժին ստանաս։ Նա չի պատասխանում այդ հարցին, լուռ է... Եւ երբ արքան յօնքերը կիտում ու տիրում է, Կորդիլիան նկա-

տելով, որ իւր ամաչկոտութեամբ և պարզասրտութեամբ հօրը շատ ցաւ է պատճառում, բոլոր ոլժը հաւաքում և ուղղակի ասում է, որ ինքը շատ շնորհակալ է իւր հօրից, որ իրան մասին այդքան հոգս է տարել, ուսում է տուել և թէ նա հօրը միշտ կըսիրէ. կըյարգէ, հնագանդ կըլինի թագաւոր հօրը, բայց միենոյն ժամանակ կըսիրէ և իւր ապագայ ամուսնուն:

Այդպիսի համարձակ պատասխան, ալդպիսի ճշմարիտ խօսքեր, առանց շողոքորթութեան, Լիր արքան երբէք, ո՞չ ոքից չէր լսել, և այդ պատճառով նա կատաղեց... Նա կարծեց, որ իւր սիրական կորդիլիան չար ու չոր սիրտ ունի... և բարկութիւնից ոչ թէ միայն զրկեց նորան օժիտից, այլ մինչև անգամ չուզեց նորան իրան աղջիկը ճանաչել և նորահետ յարաբերութիւնը բոլորովին կտրեց:

Լիր արքան բարկացած ըոպէին ինչ որ մտածէր, այն էլ կատարում էր, և

Կորդիլիայի խօսքերից վիրտւորուած, նոյն ըսպէին իւր թագաւորական իրաւունքներն ու իշխանութիւնը յանձնեց երկու մեծ աղջկներին: Բայց միևնույն ժամանակ չուզելով զրկուել թագաւորական անունից և փառք ու պատուից, նա իրան մօտ պահեց հարիւր ասպետներից բաղկացած մի խումբ պալատականների և խոստացաւ ամեն ամիս հերթով ապրել կամ Գոներիլիայի և կամ Ռեգանայի մօտ:

Բոլոր պալատականները վախից պապանձուեցին. Երբէք ծերունուն ալդպիս բարկացած չէին տեսել նոքա: Միայն մէկ ծեր պալատական, Կէնտ անունով, որը Լիր արքայի հաւատարիմ ծառան էր և Կորդիլիային իւր ձեռքերի վերայ էր մեծացրել, պաշտպանեց Կորդիլիային ասելով. Մեծ արքայ քեզ ես միշտ սիրել եմ ինչպէս հօր, պատուել եմ ինչպէս թագաւորի, լսել եմ ինչպէս մեծի և միշտ քո անունդ ես լիշել եմ իմ աղօթելուս ժամանակ... բայց երբ ես տեսնում եմ,

որ թագաւորն արդար չէ... ես նորան չեմ կարող շողոքոքթել, երբ լսում եմ... որ թագաւորն իրան անունը վայր է գըցում, ես չեմ կարող լրել: Շուտով, խելքի եկ, տէր արքայի... թռն քո այդ գըզուելի չարութիւնդ... Քանի որ ես կենդանի լինեմ, միշտ էլ պիտի ասեմ, որ դու վատ բան արի՞:

Բայց երբ ծերունին լսեց այդ համարձակ խօսքերն, այն էլ ումնից... իւր ստրուկից, իւր ծառալից, աւելի սաստիկ զալրացաւ. և Կէնտին կոպիտ խօսքեր ասելով, հրամայեց հեռանալ իւր երկրից, եթէ ոչ սպանել կըտայ նորան: Կէնտը չի հակառակում իւր թագաւորին, թէս շատ դժուար էր նորան բաժանուել հայրենիքից և նորանցից, որոնց շատ սիրում էր. Մնաս բարե՛, տէր արքայ, ասաց նա լալով. դու ցոյց տուիր, որ քեզ մօտ չկայ ոչ ճշմարտութիւն և ոչ ազատութիւն: Եւ իւտոյ դառնալով իւր սիրելուն՝ Կորդիլիալին, նա ասաց. «դու, սի-

թելի՛ զաւակս, որ գեղեցիկ ես թէ քո մտքերովդ և թէ խօսքերովդ, թռն երկինքը քեզ պաշտպանէ ու օգնէ. մնաք բարե՛, երկրի մեծաւորներ, ձեր ծերունի Կէնտն ուրիշ երկրումն էլ կըմնայ նոյն Կէնտը:

Բուրգոնդի դուքսը տեսնելով, որ Կորդիլիան էլ օժիտ չունի, հրաժարուեց նորանից, իսկ Ֆրանսիայի թագաւորը, որ սիրում էր Կորդիլիային նորա բարութեան ու պարզութեան համար, և գնահատում էր Կորդիլիային նորա օժիտից շատ աւելի, հէնց այդտեղ իսկուն խնդրեց նորա ձեռքը: Այդ բանը թագաւորին աւելի բարկացրեց և նա հեռացաւ դահլիճից, չուզելով մինչև անդամ իւր հայրական վերջին օրհնութիւնը տալ աղջբեկան: Կորդիլիան արտասուքներն աչքերին, առանց նեղանալու և առանց կոպիտ խօսքեր ասելու, խնդրեց իւր մեծ քոյլերին, որ հոգս քաշեն ծերունի հօր համար. և իւր նշանածի հետ ճանապարհնկաւ գէպի Ֆրանսիա:

Գօներիլիան և Ծեգանան էլ միայն  
այդ էին ուզում, որ հալըն իրանց թա-  
գաւորական իշխանութիւն տալ: Ծերու-  
նի թագաւորի երեխայական ցանկութիւն-  
ներն ու բարկութիւնն անտանելի էին  
դարձել այդ աղջիկների համար և ահա  
երկու քոյրը սկսեցին մտածել. թէ ինչ-  
պէս հօրը ճնշեն, կամ թէ բոյորովին  
ազատուեն այդ ձանձրալի ծերունուց:

Այն օրն, երբ Կորդիլիան ճանապարհ  
ընկաւ, Լիր արքան էլ իւր հարիւր առ-  
պետներով գնաց Գօներիլիալի մօտ ա-  
ռաջին ամիսը նորա մօտ ապրելու հա-  
մար. Ծերունու վատ ընաւորութիւնն է-  
լի առաջ եկաւ: Հէնց միւս օրը նորա  
ծաղրածուն կոռւց Գօներիլիալի մէկ  
պալատականի հետ և Լիր արքան ծե-  
ծեց այդ պալատականին: Նա ամեն մի  
չնչին բանի համար կովում, բարկանում  
էր և դեռ էլի ուզում էր ցոյց տալ իւր  
թագաւորական իշխանութիւնը, չնայելով

որ իւր բոլոր իրաւունքները տուել էր  
աղջիկներին:

Նորա մարդիկն էլ իրանց տիրոջը  
նայելով, առանց քաշուելու սկսեցին հար-  
բել ու անկարգութիւններ անել օտարի  
տան մէջ: 'Ի հարկէ այդ ամենը սաստիկ  
դուր չէր գալիս Գօներիլիալին, և նա, որ  
երբէք հօրը չէր սիրում և չար ու վատ  
սիրտ ունէր, նա էլ սկսեց հօրը բանի  
տեղ չգնել և փոխանակ նորա հետ քաղցր  
ու կարգին խօսելու և հասկացնելու, որ  
նորա արածը վատ է, Գօներիլիան հրա-  
մալեց պալատականներին, որ արքալին  
լաւ չծառայեն, չպատուեն, իսկ ծառա-  
ներին էլ պատուիրեց, որ նորա ասպետ-  
ների հետ սառը վարուեն: Որովհետև նա  
իւր բաժինը ստացել էր և հօրից էլ օ-  
գուտ չէր սպասում, մտածեց, որ լաւ է  
այդ կերպ հօրը բարկացնել և ուղարկել  
միւս քըզ մօտ:

Եւ Գօներիլիալի ուզածը շուտով կա-  
տարուեց. երբ արքան հարցրեց ծառային,

թէ ուր է Գօներիլիան, ծառան չուզեց մինչև անգամ պատասխանել թագաւորին. այն թագաւորին, որից առաջ դողում էր: Ծերունին նեղացաւ և ծեծեց նորան: Ծառան գնաց գանգատուեց տիկնոջը, և ահա Գօներիլիան բարկացած երեսով եկաւ հօր մօտ և ասաց որ ինքը միայն այս տան մէջ իրաւունքներ ունի և թէ ասպետներն ու ինքը թագաւորը իրան շատ են անհանգստացնում և աւելացրեց, որ հայրն արդէն շատ թոյլ ու ծեր է...

Լիր արքան չէր հաւատում ոչ տեսածին և ոչ էլ լսածին: Նա սարսափով տեսնում էր, որ աղջիկն իրան էլ բոլորովին չի պատփում գոնէ ինչպէս իրան հօրը... Գօներիլիան մոռանալով, որ հայրը թագաւորութեան ժամանակ սովոր էր լարգանք ու պատիւ տեսնել ամենից, շարունակ պահանջում էր, որ հայրն իւր պալատականների թիւը պահսեցնէ:

Բարկութիւնից գլուխը կորցնելով,

ծերունի արքան այդ ժամանակ միայն հասկացաւ, թէ Կորդիլիան ո՞րչափ աւելի լաւ ու քնքոյշ սիրտ ունէր. այդ ըստէին զգաց, որ Կորդիլիալի հետ շատ անարդար վարուեց. և նա կեանքի մէջ առաջին անգամ լալով ցաւից ու վիրաւորանքից, գնաց՝ միւս աղջկայ Իեղանալի մօտ:

Լիր արքան այդ ծոնր ըոպէներին միայն երկու հաւատարիմ մարդ ունէր. մէկը նորա ծաղրածուն էր, որի վերայ ծիծաղում էր ինքն արքան, իսկ միւսը կէնտն էր, որին չհասկացաւ, ինչպէս և Կորդիլիալին և նորան աքսորեց ճշմարիտ ասած խօսքերի համար... Կէնոր, հին ծառան, աւելի լաւ էր ձանառում Լիր արքալին. նա լաւ տեսնում էր իեծ աղջկների խորամանկութիւնը և նորա իրաւունքներ ստանալուց լաւ բան չէր պասում: Կէնոր նախազգալով, որ ինքը թագաւորին պետք կրգալ, չեռացաւ իւր այլենիքից. այդ հագածնաստիւնից 2

և մտաւ ծերունի թագաւորի մօտ ծառալ, որին Լիր արքան չէր ճանաչում։ Եւ ահա այդ ծառալին արքան նամակ տուեց, որ տանի աղջկան Ռեգանալին։ Կէնտը նամակը տարաւ և Ռեգանալի պալատի բակում հանդիպեց Գօներիւիալի ծառալին, որը նոյնպէս նամակ էր բերել իւր տիկնոջից։ Կէնտը ճանաչելով այդ ծառալին, որը թագաւորի հետ այսպէս կոպիտ վարուեց, բարկացած ծեծեց ալդ անպիտան ու վախկոտ ծառալին։ Ծառալի աղմուկից տան բոլոր մարդիկը դուրս թափուեցին և Ռեգանան արդէն քրոջ նամակից տեղակացած լինելով, թէ բանն ինչումն է, գործն առանց քննելու հաւատարիմ Կէնտի ոտքերը շղթալով կապել տուեց։ Կէնտը, որ վըռել էր ամեն բան համբերութեամբ տանել իւր տիրոջ Լիր արքալի համար, առանց տրտնջալու քնեց բակում, Կորդիլիալի նամակը ծոցում պահած։ Կորդիլիան արդէն վաղուց մոռացած լինելով,

որ հայրն իրան վիրաւորել է, Կէնտին նամակ էր գրել և խնդրել էր, որ նահօրը մենակ չժողղնի։

Այդ ժամանակ գալիս է և ծերունի արքան։ Երբ տեսնում է Կէնտին, ոտքերը շղթալած կապած և լսում է, որ աղջիկը չի ուզում հօրը պահել իրան ուանը, պատճառ բերելով, թէ հիւանդէ, նորա սիրտը ցաւից ճմլվում է և չը նայելով, որ նա իւր բոլոր իրաւունքները տուել էր աղջկներին, դարձեալ Լիրն «արքայ էր ոտից մինչև գըլուխ», և նա իւր ոյժը հաւաքելով, գոռալով հրամալեց, որ աղջկան կանչեն։ Ռեգանան իւր մարդու հետ եկաւ։ Աղջը-կան տեսնելով, արքայի բարկութիւնն անցաւ, նա սկսեց իւր ցաւն ու կսկիծը պատմել Ռեգանալին և գանգատուեց մեծ աղջկայ վերայ։

Միրելի Ռեգանա, ասաց նա քո քոյրդ չար, անպիտան է. նա իմ սիրտս վիրաւորեց, նա ինձ անպատուեց, Ռեգանա։

Բայց անշնորհակալ աղջկայ գութը  
չշարժուեց. նա քրոջն արդարացնում էր  
ասելով, որ հօր հետ եօլայ գնալը դժուար  
է և Գօներիլիայի նման, հօրը հասկաց-  
րեց, որ նա խելքը կորցրել է, պէտք է  
շատ խնամք տանել նորա համար և վեր-  
ջըն էլ խնդրեց, որ հայրը նորից վերա-  
դառնայ մեծ աղջկայ մօտ:

Ի՞նչպէս, գոռաց արքան. ներողութիւն  
խնդրեմ նորանից. ասեմ նորան, թէ սիրելի  
աղջկս ես ծեր եմ, ես անպէտք եմ, չո-  
քած խնդրում եմ քեզ, որ դու ինձ խղճաս,  
կերակուր, անկողին և շոր տաս ի՞նձ...

Եւ ցաւից ու վիրաւորանքից, էլ  
չհասկանալով թէ ինչ է անում, ուղիղ  
չոքաւ Ռեգանայի առաջ:

Սյդ ըոպէին Գօներիլիայի ծառան  
եկաւ ասելու, որ իւր տիկինը գալիս է:  
Լիբն արդ մարդուն տեսնելով, որն իրան  
այնպէս անպատուել էր և լսելով Գօ-  
ներիլիայի գալը, նորից կատաղեց. և Ռե-  
գանան էլի մէկ անգամ կրկնեց, որ հայ-

ըլ գնայ արդ անսիրտ ու չար աղջկայ  
մօտ: Այն, Ռեգանան էր արդ ասում, ո-  
րին հայրը կարծում էր աւելի բարի, ա-  
ւելի քնքոյց: Նորից դժբախտ արքայի  
սիրտը ցաւով լցուեց և նա էլի մէկ ան-  
գամ աղաչեց Ռեգանային, որ իրան պա-  
հէ իւր տան մէջ:

Բայց երկու քոյրերն էլ չուզեցին  
խղճալ ծերունի հօրը. նոքա շարունա-  
կում էին ասել, թէ անյարմար է այդքան  
հոգուն պահել և Ռեգանան մինչև ան-  
գամ առաջարկում էր, որ հայրը միայն  
25 մարդ պահէ մօտը: Լիբ արքան գեռ-  
լաւ չհասկանալով բոլոր վիրաւորանքնե-  
րը և տեսնելով, որ իւր ամեն փառքն ու  
պատիւը կորցնում է, համաձայնեց էլի  
գնալ մեծ աղջկայ մօտ, որովհետև գոնէ  
Գօներիլիան պահանջում էր, որ հայրը  
միայն իւր պալատականների կէսը պակ-  
սեցնէ: Բայց Գօներիլիան ասաց. չայլ  
իմ, լսեցէք. ձեզ ինչ հարկաւոր է 5,  
10, 25 մարդ. Ռեգանան շատ ծառաներ

ունի և ձեզ ոչ մէկ ծառայ պէտք չէ:

Աղջկայ վերջին խօսքերը հօր աշքերը բաց արին... նա տեսաւ, որ յաւիտեան կոլցը է իւր իրաւունքները. տեսաւ, որ իրան էլ չեն սիրում, չեն յարգում... և հասկացաւ նոյնպէս, թէ այն աղջիկներին որ այնքան օժիտ տուեց, հիմա ինքը նոցա մօտ մի ողորմելի, մի վատ ծերունի է, որին միայն իբրև ողորմութիւն պիտի պահեն:

Ո՞վ երկինք, համբերութիւն տուրինձ, ասաց նա լուսահատուած: Ո՞հ, աստուածներ, այստեղ ձեր առաջ կանդնած է մի խեղճ ծերուկ, որը խիստ ցաւերից տանջվում է. Եթէ դուք իմ դէմ զաւակներիս սիրութեամբ լցրիք, գոնէ ինձ ոյժ տուէք, որ ես չխելագարուեմ այս կրածս վիրաւորանքներից:

Եւ յանկարծ ծերունու մտքերը խառնուեցան, գլուխը վառուեց, ձեռքերը դողդողացին և նա սկսեց լալ, անիծել և անմիտ խօսքեր շշնջալ... Իմ ծաղրա-

ծուս, ես խելքս կորցնում եմ: Եւ այդպէս նորան կանչելով ու չհասկանալով թէ ինչ է անում, գլուխը կարծես կորյրած, նա ամրոցի բակից դուրս վագեց... Արքալի ետևից գնացին միայն նորա հաւատարիմ ծաղրածուն ու կէնտը... Բայց արդէն գիշերը մօտ էր, սառն ու խիստքամին քանի գնում սաստկանում էր: Ամրոցի չորս կողմն անապատ տեղ էր. ոչ մի թուփ չկար...

Իսկ աղջիկները հօրից լետոյ խկոյն հրամայեցին գաները կողպել, վախենալով, որ չկինք թէ հօր մարդիկը գրգռեն ժողովրդին իրանց դէմ:

Խուլ և վայրենի մէկ անապատ է. ոչ մի մարդ չի բնակվում ախտեղ: Փոթորիկն, անձրւն, ամպերի գոռոցն ու կալծակն ազատ մուտք ունեն ախտեղ: Դեռ այդպիսի զարհուրելի՝ գիշեր տեսնուած չէր ոչ մի ժամանակ. մինչև ան-

գամ գտղաններն ահ ու գողով թագնը-  
վում էին իրանց որչերի մէջ: Իսկ այդ  
գիշերն անապատում թափառում էր կի-  
սախելագար Լիր արքան: Նորա գլուխը  
բաց էր, քամին նորա սպիտակ մազերը  
գզգզում էր. կարծես նա ուզում էր այդ  
քամու վույփույի և ամպերի գոռգոռոցի  
մէջ ծածկել իւր սրտի անտանելի կըս-  
կիծը: Կրակ, որոտում, քամի, իմ աղ-  
ջիկներս չեին նոքա... ինքն իրան խօ-  
սում էր Լիր արքան: Ես ձեզ չեմ մե-  
ղադրում, գուք չար չեիք. Ես ձեզ իմ  
կենգանութեանս ժամանակ չտուի իմ  
թագաւորութիւնս. Ես ձեզ չանուանեցի  
իմ զաւակներս: Տիծալեցէք ինձ վերայ.  
ինձ, փթած ծերուկիս վերայ. Եթէ գուք  
չեք ամաչում, պատերազմեցէք ձեր ծեր  
ու սպիտակած հօր դէմ...»

Սրբայի ծաղրածուն, որ սովոր էր  
միշտ նորա հետ խօսել հանաքներով ու  
առակներով, հիմայ էլ զնւը էր աշխա-  
տում արտասուք թափելով, ուրախացնել

իւր սիրելի տիրոջը: Արքայի մտքելն ա-  
ւելի ու աւելի խառնվում էին. նա խել-  
քից գուրս խօսում էր թէ այդ փոթո-  
րիկով աստուածները պատժում են մեղա-  
ւոր մարդկանց... Նա սկսեց խոստովա-  
նել, որ ինքն էլ շատ մեղքեր է գործել  
բայց թէ այդ պատիժը շնտ, շնտ է ար-  
դէն իրան համար: Ցաւը, ցուրտն ու ա-  
նօգնական լինելը, կարծես նորա սիրտը  
փափկացըին և նա լիշեց խեղճ աղքատ-  
ներին, որոնք միշտ քաղցած, ծարաւ և  
ցրտից դողում են...

«Դուք, աղքատներ, մերկ ու բո-  
քիկ, անտուն, անտէր դժբախտներ,  
արդեօք այսպիսի գիշերներն ո՞րտեղ  
էք լինում, ձեր դատարկ փորով, պա-  
տըռուած շորերով և բաց գլուխնե-  
րով: Ձեզ արդեօք ո՞վ է ներս առնում  
խեղճ մարդիկ. ո՞րչափ ես քիչ եմ մտա-  
ծել այդ մասին: Սովորիր հարուստ, սո-  
վորիր մեծատուն, գործով իմանալ քո  
փոքը եղբայրներիդ աղքատութիւնն ու

թշուառութիւնը. Թող սիրտդ ցաւի նոցա ցաւերով և քո վերջին կտոր հացդ նոցա տուր»: Զուր էր բարի Կէնտը խընդրում արքային, որ վրանը մտնի. նա չէր լսում Կէնտին և սիրտը բռնելով, նա ասում էր, որ իւր հոգու ցաւից և աղջկների անշնորհակալ ու երախտամոռ լինելուց, նա չի զգում մարմնի ցաւը: Եւ լիշելով, որ իւր աղջիկները մինչեւ անգամ այդպիսի գարհուրելի՛ գիշերը իրան տեղ չտուին ու վռնտեցին իրանց թագաւոր հօրը, ինչպէս մէկ աղքատի, նա լալիս աղօթում էր... Այդ անապատում հանդիպելով մէկ աղքատ խելագարի, որը կիսամերկ էր և կեղտոտ ու մաշուած շորեր ունէր, նա իւր արքայական զգեստը պատուտեց, տուեց նորան կտորտանքները. և այդ խեղճ մարդուն տաքացնելու ու կերակրելու համար վերջապէս համաձայնեց գնալ նորա հետմի հեռու ագարակ, որտեղ Կէնտը արքայի համար տեղ էր պատրաստել: Բայց

օգնութիւնն առհասարակ ուշ է հասնում: Թագաւորի ծեր ու թոյլ մարմինը շկարողացաւ դիմանալ ալդ ամեն ցաւերին և նա բոլորովին խելքը կորցրեց: Նա շարունակ տեսնում էր իւր երախտամոռ աղջկների երեսները և լոգնած ու ոլժից ընկած, նա մոռացաւ ուտելու մասին և քնեց անհանգիստ քնով:

---

Մի և նոյն ժամանակ Գօներիլիան ու Ռեգանան, որ երբէք իրար չէին սիրում, սկսեցին կոռուել ժառանգութեան և երկրի կառավարութեան համար, իրար դէմ գրգռելով և իրանց ամուսիններին: Այդ կոռուի լուրը և ծերունի արքայի հետ գաղանի պէս վարուելը հասաւ մինչեւ Ֆրանսիա: Կորդիլիան, որ Կէնտի նման ամեն վատ բան սպասում էր քոյրերի կողմից, խնդրեց իւր ամուսնուց, Ֆրանսիայի թագաւորից, զօրք տալ իրան, որ գնալ քոյրերի՝ դէմ պատերազմ: Զօրքը

ծածուկ կերպով բանակ դրեց Դօվէր քա-  
ղաքում և Կէնտն իմանալով Կորդիլիալի  
միտքը, նամակ գրեց նորան և յայտնեց  
ամեն բան դժբախտ արքայի մասին։  
Կորդիլիան դեռ շատ բան չգիտէր և այդ  
նամակը նորան անչափ տիրեցրեց։ Նա  
լալիս էր և արտասուքների կաթիլները  
գլորփում էին նորա քնքոյշ երեսի վերայ։  
Նա ինքն իրան աշխատում էր միխթա-  
րել և ինչպէս որ գարնան օրը համ ա-  
ըրե է լինում։ Համ անձրե, ալնպէս էլ  
նորա սիրուն երեսի վերայ երեսում էր  
թէ տիրութիւն և թէ ուրախութիւն և  
արտասուքն ու ժպիտը խառնվում էին  
միասին։ Նորա փայլուն աչքերեց մարգար-  
տի նման արտասուքները գլորփում էին  
և ժպիտը չէր հեռանում նորա սիրուն  
շլթունքներից։ Մէկ, երկու անգամ շը-  
շընջալով, նա ասաց. Հայրիկ... կար-  
ծես այդ խօսքը նորան ճնշում էր և նա  
քարձը կանչեց «Ա՞խ, քոլրեր, վատ քոյ-  
թերս, ամաչեցէք... ծերունի հայրս...»

Կէնտ... Բնչպէս թէ գիշերը... փոթո-  
րիկ ժամանակ... աշխարհիս երեսին մի-  
թէ խղճմտանք չկալ։ Այդ խօսքերից  
յետով, հրաշալի աչքերից արտասուքը  
գետի նման վազեց և լալով հեռացաւ  
նամակ բերողի մօտից, որ մենակ մնաց  
իւր ցաւի հետ միասին։

Իսկ արքան զարթեց այդ ժամանակ  
և կարծես խելքի եկաւ։ Նա կարծես աչ-  
քերի առաջ տեսնում էր իւր անցեալ  
կեանքը, որն էլ ետ չէր դառնալու։ Նա  
ամօթից վառուեց, երբ մտաքերեց, որ  
Կորդիլիալի հետ շատ վատ վարուեց, նո-  
րան զրկեց ժառանգութիւնից և մինչեւ  
անգամ չտուեց իւր վերջին հայրական  
օրհնութիւնը։ Լիր արքան ինքնասէր էր  
և վախենում էր գնալ Կորդիլիայի մօտ,  
որի երեսն անգամ ինքը չուղեց տեսնել։  
Այդ լիշողութիւնների ժամանակ նորից  
ցնորուեց, նորից մենակ վազեց դաշտը  
և ոկսեց ինքն իրան խօսել։ Նա անդա-  
դար մտաքերում էր իւր կորցրած թա-

գաւորութիւնը, փառքն ու պատիւը և  
աւելի ու աւելի խառնվում էին նորա  
մտքերը. Նա խօսում էր մարդկանց ա-  
նարդարութեան մասին, և աշա այդ բո-  
պէին, ինքն էլ չհասկանալով թէ ինչ  
է անում, սկսեց գլուխը զարդարել զա-  
նազան ծաղկիներով, ամեն տեսակ ան-  
պէտք խոտերով և գողդոջիւն, թէ և  
դեռ էլի բարձր ձայնով երգում էր հին  
հին երգեր և մենակ թափառում ու  
ու վազգում էր դաշտի մէջ:

Այդ մասին էլ լուց կորդիլիան. նո-  
րա տիրութեանը շափ չկար. «Ամեն տեղ  
պէտք է փնտուել հօրս, հրամայեց նա  
իւր ծառաներին: Ուղարկեցէք շատ զօրք,  
որ ման գան ամեն ամայի ու ետ ընկած  
տեղերում և գտնեն հօրս»: Նա վախե-  
ցած հարց ու փորձ էր անում իւր բժշշ-  
կից, թէ արդեօք նա կարո՞ղ է լաւացնել  
ցնորուած հօրը և խոստանում էր բը-  
ժշկին ամեն բան, ինչ որ նա պահանջէ  
բժշկութեան համար: Յուսահատուած

նա խնդրում էր երկնքից, որ իւր սի-  
րելի հօրը մխիթարէ և չթողնի, որ հայ-  
ը մի փորձանքի հանդիպի: «Հայրիկ, սի-  
րելի հայրիկս» ասում էր նա, երբ լսեց  
որ իրիտանիալի զօրքը գալիս է իրան  
դէմ պատերազմ: «Ես քեզ համար եմ  
թշնամիների դէմ գնում. Ես քեզ համար  
ջերմ արտասուքներով խնդրեցի Փրան-  
սիալի թագաւորից, իմ ամուսնուց, որ  
նա ինձ զօրք տար: Մենք գնում ենք  
պատերազմ ո՛չ թէ երկրներ նուաճելու  
համար, այլ սուրբ սիրոյ և ծերունի հօրս  
իրաւունքները պաշտպանելու համար:  
Արդեօք ես նորան շուտով կըտեսնեմ,  
շուտով կըլսեմ նորա ձայնը»:

Կորդիլիալի մարդիկը վերջապէս գը-  
տան Լիր արքալին. Նա բոլորովին խե-  
լագարուած էր: Ասում էին, որ եկել են  
Կորդիլիալի մօտ տանելու նորան, բայց  
զո՞ւր, նա ոչինչ չէր հասկանում. միայն  
տեսնում էր, որ իրան մօտ մարդիկ կան  
և կարծում էր թէ նոքա եկել են, որ

Խաբելով ու խորամանկութեամբ իրան  
գերի տանեն: «Ոչ ոք ինձ չի կարող օգ-  
նել, ասում է նա. միայնակ, տխուր եմ  
ես. աչքերս արտասուքներից վշացել են-  
ես այնքան եմ լալիս, որ իմ արտասուք-  
ներովս կարելի կը լինէր ծաղիկներ ջրել  
և թողոտ ճանապարհները թրջել:» Եւ  
նա սկսում էր ծիծաղել ու իւր շորերը  
վեր բարձրացնելով, առաջարկում էր վա-  
զել իրան ետևից: Կորդիլիալի մարդիկ  
շատ տխրեցին, տեսնելով արքայ Լիրին  
այդպէս և նորան ուշաթափուած տա-  
րան աղջկայ բանակը:

Ֆրանսիական բանակում, Կորդիլիա-  
լի վրանի մէջ, քնած էր փափուկ անկող-  
նի վերայ ծերունի, վշտահար թագա-  
ւորը: Աղջկայ հրամանով նորան նոր շո-  
րեր էին հագցրել քնած ժամանակը: Նո-  
րա զարթելուն սպասում էին Կորդիլիան  
և կէնտը: Կորդիլիան շուտ շուտ հարց-  
նում էր բժշկին, թէ ի՞նչպէս է արքայի  
առողջութիւնը և աղօթում էր շարու-

նակ: Ո՞հ, երկինք, բժշկէ հօրս ծանր  
վէրքերը, պահպանէ ամեն տեսակ տան-  
ջանքներից այդ ծերունուն, որը հիմայ  
երեխալի է նման և ոյժ տուր նորան:  
Բժիշկը գիտենալով, որ հոգեկան հի-  
ւանդութիւնները դեղերով դժուար է լա-  
ւացնել, խնդրեց Կորդիլիալին, որ հօր  
անկողնին աւելի մօտ կանգնի, իսկ ե-  
րաժիշտներին էլ հրամալեց, որ նուագեն:  
Բժիշկը լուս ունէր, որ աղջկայ տեսքը և  
երաժշտութեան քաղցր ձալները խեղճ  
ցնորուած ծերունու վերայ լաւ կ'ազդեն  
և նա կարող է նորից խելքի գալ: Եւ  
այդպէս Կորդիլիան չոքեց հօր անկողնի  
առաջ. իսկ երաժիշտները սկսեցին նուա-  
գել: «Հայրիկ, սիրելի՛ հայրիկս, ասում էր  
Կորդիլիան, համբուրելով քնած թագա-  
ւորին. թող այս համբուրիս հետ միասին  
իմ շրթունքներս քեզ առողջութիւն տան.  
թող նոքա քեզ բժշկեն այն խիսա ցա-  
ւից, որ իմ քուրերս քեզ հասցըին ծերու-  
թեանդ օրերում: Եթէ դու նոցա հայրն

Էլ չինէիր, միայն քո սպիտակ մազերիդ  
պէտք է խնայէին նոքա: Մթթէ դու բաց  
գլխով ման էիր գալիս փոթորիկի ու անձ-  
րւկի ժամանակ. մթթէ այս սպիտակ գըլ-  
խիդ վերալ փայլում էր կալծակը և դու  
անտուն ու անտէր էիր մնացել, խեղճ  
ծերունի: Իմ թշնամուս շունը, այն շու-  
նը, որն ինձ մինչեւ անգամ կծած լինէր,  
ես արդպիսի զարհուրելի գիշերը կը-  
տանէի իմ տունս և կըտաքացնէի կրա-  
կի առաջ: Իսկ դու հայր, իմ սիրելի  
հայրս, արդպիսի գիշերը ստիպուած էիր  
դուրսը մնալ: Ո՞հ, աստուածներ, լաւ որ  
հօրս մարմինն էլ խելքի հետ միասին  
չկորաւ»:

Այդ ըոպէին Լիր արքան զարթեց.  
Կորդիլիան վախենում էր, որ յուզմունքը  
շատ չագդէ ծերունի հիւանդի վերայ և  
խնդրեց բժշկին խօսել հօր հետ. բայց  
բժիշկն ասաց, որ առաջինը պէտք է նա  
ինքը խօսի: Եւ ահա Կորդիլիան յու-  
զուած ձայնով և արտասուբներից գեռ-

չչորացած աչքերով, չոքաւ հօր անկող-  
նի առաջ և հարցրեց.

Առողջ է իմ մեծ հայրը. թնչպէս է  
իրան զգում արքան:

Բայց արքան չէր ճանաչում նորան:  
Ինչու, ասում էր նա, ինձ իմ դագա-  
ղիցս հանեցին: Ֆու հրեշտակ ես: Ես լա-  
լիս եմ և այս արտասուբներն ալրվում...  
կորչում են...

Ճանաչեցի՞ք ինձ, արքայ» հարցնում  
է աղջիկը:

Ես քեզ ճանաչում եմ, դու սուբբ  
հոգի ես. վաղուց լ' որ մեռել ես:

Տէր արքայ, ինձ նալեցէք, ձեր ձեռ-  
քերը դրէք իմ գլխիս վերայ և օրհնե-  
ցէք ինձ...

Բայց արքան, որ դեռ խելքի չէր  
եկել, յանկարծ չոքեց աղջկայ առաջ.  
Խնդրում եմ քեզ, ասում էր նա, մի՛  
ծիծաղիը ինձ վերայ. Ես մի անպաշտ-  
պան ու լիմար ծերունի եմ... ես ութ-  
սուն տարեկան եմ և խելքս բոլորովին

տեղը չե... Բայց քեզ կարծես ճանաչում  
եմ և նորան էլ, յոյց տալով Կէնտին:  
Մտածում եմ, թէ ո՞րտեղ եմ եօ և այս  
նոր շորն ո՞վ տուեց ինձ, ամբողջ գիշերն  
ո՞րտեղ եմ քնել, այդ էլ չեմ լիշում: Բայց  
խնդրում եմ, չծիծաղէք, ինձ թւում է  
որ այս տիկինն իմ Կորդիլիա աղջիկս է...

Միայն այդ խօսքերին էր սպասում  
աղջիկը. ուրախութիւնից լալով, նա ընկաւ  
հօր գիրկը և նորան համբուրելով ու  
փայփայելով շարունակ կրկնում էր «այդ  
ես եմ... ես...» Յանկարծակի ուրախու-  
թիւնից արքայի խելքը գլուխն եկաւ:

Թողլ տուր համբուրեմ քո աչքերդ,  
բայց նոքա թաց են. խնդրում եմ քեզ, մի  
լար... դու ինձ չես սիրում: Քո քոյլերդ  
առանց պատճառի ինձ վիրաւորեցին, իսկ  
դու պատճառ ունիս...

Բայց Կորդիլիան նորա խօսքը կտրե-  
լով և համբուրելով հօրն, անդադար ա-  
սում էր «ո՞չ, ո՞չ, ոչ մի պատճառ չկայ:»  
Արքան քիչ քիչ սկսեց մտաբերել.

Հարցնում էր, թէ արդեօք իրան Փրան-  
սիմ են բերել, Կորդիլիայի մօտ: Բայց  
Կէնտը պատասխանում էր, որ Լիր ար-  
քան էլի իրան առաջուայ թագաւո-  
րութեան մէջն է: Արքան չէր հաւա-  
տում իւր լսածին և նորից կասկա-  
ծում էր, որ վրէն ծիծաղում են... Այն  
ժամանակ բժիշկը տեսնելով, որ թէն  
արքան լաւացաւ, բայց հին, տխուր լի-  
շողութիւնները մտաբերելով, կարող է նո-  
րից հիւանդանալ, նա խորհուրդ տուեց  
Կորդիլիային, որ հօր հետ ման գալու գնայ:  
Լիր արքան իսկոյն համաձայնեց. Այն,  
այն, ասում էր նա, քեզ հետ միասին...  
Ներէ ինձ և անցեալը մոռացիք, ես ծեր  
և լիմար եմ: Բայց բարի աղջիկն արդէն  
վաղուց մոռացել էր այդ վիրաւորանքը  
և ծերունու թերից բռնելով, տարաւ նո-  
րան պարտէզ, ինչպէս որ այդ անում էր  
աղջիկ ժամանակ, որ այնտեղ իւր սիրով,  
քնքշութեամբ ու ուրախ ուրախ հետը  
խօսելով, բոլորովին հանգստացնէ և միխ-

թարէ թանգագին, ծերունի հօրը:

Միենոյն ժամանակ, երբ այդ ամենը կատարվում էր Կորդիլիալի բանակում, մեծ քոյլերը և նոցա ամուսիններն իրար դէմ կռվում էին: Գոներիլիալի մարդը, Ալբանին, պատրաստ էր զնալ ֆրանսիալի դէմ պատերազմ, երկրներ նուաճելու համար, բայց չէր վճռվում նորից նեղացնել ծերունի Լիլ արքալին, որովհետեւ մինչև անգամ նա սարսափում էր, որ իւր կինը, Գոներիլիան, ալդակէս վատ ու խիստ վարուեց հօր հետ: Խոկ Կորնեվալիսի դուքսը, Բեգանալի մարդն, իւր չար բնաւորութեամբ շատ նման էր իրան կնոջը: Նորա ծառան, էլ չդիմանալով տիրոջ խստութիւններին, սպանեց նորան: Բեգանան երկրորդ անգամ պատկուեց մի պալատականի որդու հետ, էղմունդ անունով, որը Բրիտանական զօրքի հրամանատարն եղաւ: Խոկ այդ ժամանակ Ալբանին անցաւ Լիլ արքալի կողմը: Բայց մինչև որ Ալբանին աշխատում էր էդ-

մունդին խանգարել զօրքի հրամանատար լինելու, Եղմունդն արդէն գնաց ֆրանսիացիների դէմ պատերազմ, յաղթեց նոցա և ծերունի Լիլ արքալին ու Կորդիլիալին գերի առաւ: Կորդիլիան իրան մասին չէր մտածում. նա կարող էր ճշմարիտ գործի համար փորձանքի վերալ արհամարհանքով նայել. բայց նա հոգս էր տանում մօր համար, նա վախենում էր, որ հայրը գերի ընկած ժամանակ կարող է տեսնել մեծ աղջկներին և ցաւից, նորից խելքը կորցնել: Բայց Լիլ արքան նոցա մասին էլ չէր մտածում: Դու ինձ հետ ես, ասում էր նա, իմ սիրելի զաւակս, իմ Կորդիլիան: Եւ նորան էլ բան պէտք չէր: Շուտով, գնանք բանտ. ասում էր նա թոյլ ձախով. և նա արդէն երեակայում էր, թէ ինչպէս երջանիկ կըլինի բանտում իւր սիրելի աղջկայ հետ: Մենք վանդակում ընկած թռչունների նման, բանտում կ'երգենք, ալդպէս նա միսիթարում էր աղջկան: Երբ դու խընդ-

բես, որ ես քեզ օրհնեմ, ինքս կըշոքեմ  
քո առաջ և ներողութիւն կըխնդրեմ քե-  
զանից: Եւ այդպէս, մենք երկուսով կ'ապ-  
րենք, կ'երգենք, կ'ազօթենք, հեքեաթ-  
ներ կըպատմենք և երկար երկար կը-  
մնանք բանտում, առանց ցալի ու հոգ-  
սի: Եւ քնչոյց կերպով գրկած իւր աղջ-  
կան, որին հիմայ միայն կարողացաւ գնա-  
հատել, մտաւ բանտի այն սենեակը, որ  
նորա համար նշանակել էր չարասիրտ Եդ-  
մունդը:

Եդմունդը վախենալով, որ չինք թէ  
ֆրանսիայի թագաւորը շտապի գալ օգ-  
նութեան իւր կնոջը, Կորդիլիային և թէ  
ժողովուրդը լսելով թագուհու բանտար-  
կուելը, կարող էր գրգռուել, այդ պատ-  
ճառով, նա հրամայեց, որ ծածուկ կեր-  
պով բանտումը սպանեն Կորդիլիային: Ուշ  
է գալիս Ալբանին Եդմունդի դէմ կռուե-  
լու: Նա սաստիկ վիրաւորուած էր, որ  
Եդմունդն առանց հրամանի, ինքնա-  
գլուխ, զօրքի կառավարիչ էր գրձել և


ասպետական սովորութեամբ Եդմունդին  
կանչեց դէմ առ դէմ կռուելու: Այդ մե-  
նամարտութեան ժամանակ յանկարծ գա-  
լիս է և Եդմունդի եղբարը, որը նոյն-  
պէս ուզում էր Եդմունդին սպանել, ո-  
րովհետև սա էլ Կորդիլիայի նման հօ-  
րից ժառանգութիւն չէր ստացել և այդ-  
պէս երկուսով յարձակուելով Եդմունդի  
վերայ, վիրաւորում են նորան և մեռ-  
նելիս միայն նա խոստովանում է, որ հրա-  
մայել է Կորդիլիային սպանել:

Ալբանին իսկոյն ուղարկում է մէկ  
ձիաւորի, որ շուտով գնայ և արգելէ  
Եդմունդի գաղանային վարմունքը: Բայց  
արգէն ուշ է լինում. ձիաւորին հանդի-  
պում է բանտից արձակուած Լիր արքան,  
մեռած տղջկան գրկումը: Նա այս ան-  
գամ արգէն բոլորովին ցնդուած էր: Զհա-  
ւատալով, որ իւր աղջիկը մեռած է, նա  
նորա սառը շըթունքներին մօտեցնում  
էր գրիչ, հայելի և նորան թւում էր, թէ  
աղջիկը դեռ կենդանի էր: Թանգարին

մարմինը գնելով գետնի վերալ. ինքն էլ  
վրէն էր ընկնում և լալիս էր հեկեկա-  
լով: «Իմ փոքրիկ ու սիրուն երեխալիս  
կախել են, ասում էր նա. չէ, չէ, նա  
էլ կենդանի չէ. ախ, երբէք, դու էլ չես  
գայ մեզ մօտ. երբէք, երբէք... Խելքը  
կորցրած ծերունին էլ չդիմացաւ այդ վեր-  
ջին ցաւին: Աղջկալ սառը մարմինը ջերմ  
համբուրելով, ծերունի, վշտահար հաւըն  
ինքն էլ մեռաւ: Եւ դոցա համար լացող  
ու ցաւող կէնտը, դարձեալ կանգնած էր  
այդտեղ այդ ըոպէին: Այդ հաւատարիմ  
ծառան տեսաւ իւր սիրելի արքալի, իւր  
տիրոջ շունչը փշելը:

Եւ այդպէս Լիր արքան չարաչար  
կերպով պատժուեց, որովհետեւ չկարողա-  
ցաւ իւր մեծ աղջկների դատարկ, կեղ-  
ծաւոր, թէե սիրուն խօսքերը զանազա-  
նել կորդիւխայի սրակ գեղեցիկ, պարզ ու  
անկեղծ զգացմունքից:





ALOSSA

ՀՀ Ազգային գրադարան



NL0596564

